ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իրանահայ գաղութի իրավական դրության հիմքը եկեղեցական ինքնավարությունն է՝ հանձին գոյություն ունեցող թեմերի։ Ինքնավարության այդ ձևը հատուկ է գաղութին XI դարից, երբ այստեղ հիմնվեցին հայկական առաջին բնակավայրերը։ Այդ պահից գաղութում եղել են ինքնավարության սեփական մարմինները՝ թեմական առաջնորդարանները։ XX դարից նրանք գոյություն ունեն թեմական կամ համայնական խորհուրդների ձևով։

Գաղութի թեմերը, հայկական մյուս գաղթավայրերի նման, դարավոր սովորութային իրավունքի և նաղույն եկեղեցական կանոնների համաձայն միշտ էլ ենթարկվել են ամենայն հայոց կաթողիկոսությանը։ XII դարի սկզբից մինչև XV դարի 40-ական թթ.՝ Կիլիկիայի հայկական պետության անկումը, նրանք ենթարկվում էին Հռոմկլային, որտեղ գտնվում էր կաթողիկոսությունը։ 1441 թ., երբ կաթողիկոսական աթոռը կրկին հաստատվեց Էջմիածնում, Իրանի տերիտորիայում գտնվող թեմերը ենթարկվեցին նրան։ Քանի որ այն ժամանակ Էջմիածինը գտնվում էր պարսկական տիրապետության ոլորտում, ապա պարսկական կառավարողների «գրովն և հրամանաւն նստիւր կաթողիկոսն, և անարգելչրեն վարէր զիշխանութիւնն իւր ի յազգս Հայոց»[1]։

Չնայած եկեղեցական ինքնավարության և դրա համապատասխան մարմինների առկայությանը, գաղութը իրանական պետության կողմից պաշտոնապես բնավ չի ճանաչվել, և նրա իրավունքները որևէ փաստաթղթով չեն սահմանված։ Սակայն այդ հանգամանքը չի խանգարել գաղութի լուռ գոյությանը, քանի որ նրա իրավական վիճակը ամրապնդված էր շահական մի շարք ֆերմաններով։ Իրանական իշխանությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում, ելնելով երկրի արտաքին և ներքին դրությունից, հաշվի էին նստում գաղութի ինքնավարության մարմինների հետ, արձագանքում նրանց խնդիրներին և միջնորդություններին։ Դրանով իսկ ճանաչվել է գաղութի փաստական գոյությունը։

Իրանի շահերի քաղաքականությունը գաղութի նկատմամբ միշտ էլ համապատասխանել է երկրի կառավարող շրջանների շահերին և փոխվել է ներքին ու արտաքին իրադրության համեմատ։

Նախորդ դարերում եկեղեցական ինքնավարության շրջանակներում գաղութի գոյությունը ապահոված իրավական նորմերի էությունը հիմնականում պահպանվում է նաև մեր օրերում։ Դրանք սոսկ նոր ձևեր և գունավորում են ստացել։

* * *

Ընդհուպ մինչև 1940-ական թթ. գաղութը բաժանված է եղել երկու թեմերի՝ Ատրպատականի և Իրանա-Հնդկականի։ Թեմերի կենտրոնները համապատասխանաբար եղել են Թավրիզը և Նոր-Ջուղան։ 1944 թ. Իրանա-Հնդկական թեմի մեջ մտնող համայնքների մի մասից կազմվեց նոր թեմ՝ Թեհրանի թեմը, կենտրոն ունենալով Թեհրանը։

Մինչև 1900-ական թթ. թեմերի ղեկավարությունը շարունակում էր մնալ թեմական առաջնորդների ձեռքում։ Հետագայում մշակվեցին թեմական կանոնադրություններ, հիմնվեցին ընտրովի թեմական խորհուրդներ։ Դրանով իսկ թեմական առաջնորդների իշխանությունը մասամբ սահմանափակվեց։ Ըստ կանոնադրությունների ստեղծվեցին թեմական պատգամավորական ժողովներ, ընտրովի մարմիններ, որոնք որոշակի հաջորդականությամբ թարմացվում էին։ Նրանք դարձան թեմերի յուրահատուկ գերագույն օրենսդիր օրգաններ և իրավունք ունեին ընտրել թեմական խորհուրդներ, որոնք հանդես էին գալիս իբրև թեմի գերագույն գործադիր մարմին։ Թեմական

---

1 *Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ 1873, էջ 51։*

խորհուրդները բաղկացած էին աշխարհիկ անձերից։ Խորհրդի նախագահը թեմական առաջնորդն էր։ Ի դեմս գործակալությունների թեմական իշխանություններն ունեին իրենց ներկայացուցչություններ նահանգներում։ Գործակալներ էին տեղական քահանաները։ Թեմական առաջնորդներին ընտրում էին թեմական խորհուրդները, ապա նրանք հաստատվում էին կաթողիկոսի կողմից։ Իրանական պետությունը ճանաչում էր թեմական կանոնադրությունները, իսկ թեմական առաջնորդների ընտրությանը և հաստատմանը չէր խառնվում։ Բաղդադի ինքնավարության այդ սիստեմը, աննշան փոփոխություններով, ուժի մեջ է մնում առ այսօր։ Սակայն այս կամ այն թեմի կառուցվածքը սահմանադիր և կազմակերպական բնույթի տարբերություններ ունի։

Թավրիզի թեմը։ Այս թեմը միավորում է հյուսիսային նահանգներում բնակվող հայ ազգաբնակչությունը։ Մինչև 1833 թ. նա կոչվում էր Ատրպատականի թեմ, իսկ նրա կենտրոնն էր Մակուի սբ. Թադեոսի վանքը։ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելուց հետո Ատրպատականի թեմի կենտրոնը տեղափոխվում է Թավրիզ, քանի որ սբ. Թադեոսի վանքը գտնվում էր անմիջապես ռուս-պարսկական սահմանի վրա։

1901 թ. թեմը մշակում է իր կանոնադրությունը՝ «Ատրպատականի թեմական առաջնորդի ընտրության համար կայանալիք ընտրողական ընդհանուր ժողովո ներքին կանոնադրություն»[2]։

Թավրիզի թեմական խորհրդի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նահանգի հայկական բնակավայրերի (Ռեզայե, Սալմաստ, Ղարադաղ, Մարաղա և այլն) ղեկավարության հետ մեկտեղ կատարում է նաև Թավրիզի քաղաքային գործադիր ժողովի և հարակից մարմինների ֆունկցիաները[3]։ Թավրիզի թեմի ներկայացուցչական ժողովը ընտրվում է չորս տարին մեկ և բաղկացած է 16 անդամից, որոնցից 8-ը գավառներից են, 6-ը՝ Թավրիզից և 2-ը՝ եկեղեցու կողմից։ Ժողովի ընտրած թեմական խորհուրդը իր կազմում ունի 6 անդամ, 7-րդ անդամը նախագահն է՝ թեմական առաջնորդը։

1913—1948 թթ. Թավրիզի թեմական առաջնորդն էր Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանդյանը։ Նրա մահից հետո, մինչև 1949 թ. վերջերը, թեմականի պարտականությունները համատեղում էր առաջնորդ Ռուբեն եպիսկոպոս Դրամբյանը։ 1961 թ., երբ թեմը անօրինական կերպով հափշտակվեց Անթիլիասի կողմից, թեմական առաջնորդներ նշանակվում են վերջինիս կողմից։

XIX դարի վերջից մինչև 1936 թ. թեմը կարևոր դեր է խաղացել իրանահայերի կյանքում։

Իրանա-հնդկական թեմը։ 1605—1606 թթ. Սպահանի շրջակայքում հայ բնակչության հիմնավորումից հետո ստեղծվում է Նոր Ջուղայի թեմը։ Հետագայում, XVIII—XIX դարերում, երբ գաղութի հայ բնակչության մի մասը գաղթում է Հնդկաստան, ինչպես նաև Հարավ-Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրներ, թեմը փոխում է իր անունը և կոչվում Իրանա-հնդկական թեմ։ 1909 թ. նա մշակում է իր կանոնադրությունը՝ «Կանոնադրություն Պարսկա-Հնդկաստանի թեմի հայոց ազգային սահմանադրության»[4]։ Ստեղծված լինելով 1905—1911 թթ., այդ կանոնադրությունը իր վրա կրում է իրանական հեղափոխության ազդեցությունը։ Այդ պատճառով էլ տեղական համայնքային կազմակերպությունները ավելի մեծ իրավունքներով են օժտված, քան հյուսիսային նահանգներում։

Արդեն այդ տարիներին տվյալ շրջանի հասարակական կյանքի վրա ազդում են կենտրոնախույս ուժերը, որոնք սկիզբ են դնում թեմի քայքայմանը և մի շարք ինքնուրույն համայնքների կազմակերպմանը։ 1920-ական թթ. այդ պրոցեսի ուժեղացման ազդակ հանդիսացավ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և, մասնավորապես, Թեհրանի աճը, ինչպես նաև հայկական բնակավայրերի ստեղծումը երկրի հարավի նավթաբեր շրջաններում՝ Ախվազում, Աբադանում, Մեսջեդ-Սուլեյմանում, Աղա-Ջարիում և այլ տեղերում։

Դեռևս 1912 թ. նոյեմբերին էջմիածինը թույլատրեց Իրանա-հնդկական թեմը բաժանել երկու մասի՝ Նոր Ջուղա և Թեհրան կենտրոններով[5]։ Այդ տարիներին, սակայն, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կողմնակիցների միջև ծագած բախումների հետևանքով թեմի բաժանումը տեղի չունեցավ, իսկ սկսված առաջին համաշխարհային պատերազմը այդ խնդիրը հետաձգեց երկար ժամանակով։ 1923 թ. ստեղծվեց նաև համայնքի խորհուրդ։ Դրանով իսկ ավարտվեց հոգևոր իշխանության և համայնքային կազմակերպությունների լիակատար տարանջատումը։ Ճիշտ է, իշխանությունը շարունակում էր մնալ թեմական առաջնորդների ձեռքին, որոնք յուրահատուկ կապող օղակ էին եկեղեցական և համայնքային խորհուրդների միջև։ Նրանց նախագահությամբ

2 ՀԿՊՊԱ, ֆ. 56, ց. 4, դ. 289, թ. 3։

3 Տե՛ս «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 149—150։

4 ՀԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1860, թթ. 2—8։

5 Նույն տեղում, դ. 1945, թ. 39։

խորհուրդները վճռում էին ինչպես Նոր Ջուղայի, այնպես էլ նրա ենթակայության տակ գտնվող շրջանների բոլոր գործերը[6]։ Բայց նման դրություն Նոր Ջուղայում հարատևեց մինչև 1930-ական թվականների սկիզբը։

1920—1924 թթ. թեմի առաջնորդն էր Սահակ արքեպիսկոպոս Այվազյանը, որն այդ թեմը վարել էր նաև 1902—1912 թթ.։ Նրանից հետո թեմը գլխավորեց Մեսրոպ եպիսկոպոս (Մագիստրոս) Տեր-Մովսիսյանը՝ 1926—1930 թթ.։ 1930 թ. ընդհուպ մինչև 1945 թ. թեմակալի պաշտոնը Նոր Ջուղայում թափուր էր մնում։ 1945 թ. էջմիածնից ուղարկվեց որպես թեմակալ Վահան եպիսկոպոս Կոստանյանը։ Բայց նա մնաց այնտեղ մինչև 1949 թ.։

Միասնական կազմակերպական կառուցվածքի բացակայության պատճառով մինչև վերջին ժամանակներս Իրանա-հնդկական թեմում յուրաքանչյուր համայնք ուներ իր ինքնավարության մարմինները։ Եթե Նոր Ջուղայում, ինչպես նշվեց վերևում, այդ մարմիններն էին համայնքի ժողովը և համայնքի խորհուրդը, ապա Ախվազում այդպիսին հանդիսանում էր համայնքի վարչությունը, Արաղանում և Խորեմշեհրում՝ սկզբում եկեղեցիների և դպրոցների միացյալ հոգաբարձությունը, իսկ հետո՝ այդ քաղաքներից յուրաքանչյուրի հոգաբարձությունը առանձին, Մեսջեդ-Սուլեյմանում՝ ծխական խորհուրդը և այլն[7]։ Ռեշտում համայնքի խորհրդի ֆունկցիաները կատարում էր Հորդանանյան դպրոցի հոգաբարձությունը։ Նման ֆունկցիաներով էին օժտված նաև Համադանի, Փեհլեվիի[8] և մյուս քաղաքների դպրոցական հոգաբարձությունները։ Միայն 1950-ական թթ. վերջերին այնտեղ ստեղծվեցին թեմական մարմիններ։ 1961 թ. Նոր Ջուղա ժամանեց Անթիլիասի նշանակած թեմակալը։

Թեհրանի թեմը։ Ստեղծվել է 1944 թ. սեպտեմբերին։ Թեմի ստեղծման նախադրյալներն էին Թեհրանի հայ ազգաբնակչության թվական աճը, գաղութի ինքնավարության օրգանների մայրաքաղաքում գտնվելը, գաղութի հասարակական ու մշակութային հիմնական ուժերի Թեհրանում հիմնվելը և այլն։

Չնայած պաշտոնապես թեմի ստեղծումը հապաղեց, բայց Թեհրանի համայնքը խիստ կարևոր դեր էր խաղում գաղութի կյանքում։ Նա ուներ իր մարմինները, որոնք իրենց նշանակությամբ մոտ էին թեմական մարմիններին՝ ընդհանուր ժողով, համայնքի վարչություն (ազգային խորհուրդ) և վերստուգիչ հանձնաժողով։ Թեհրանի համայնքի գործադիր մարմինը՝ համայնքի վարչությունը, ուներ դեռևս 1912 թ. ընդունված իր կանոնադրությունը։

Թեհրանի ազգային խորհուրդը աստիճանաբար յուրացրեց երկրի ողջ հայ բնակչության լիիրավ մարմնի ֆունկցիաները։ Իրանական իշխանությունները նրան ճանաչեցին որպես գաղութի ներկայացուցչական մարմին։ 1917—1918 թթ. գաղութի հարավային շրջանների համայնքները սկսեցին Թեհրան ուղարկել իրենց ներկայացուցիչներին, որոնցից կազմվեց իրանահայերի խորհուրդ[10]։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թեհրանում տարբեր խմբերի միջև պայքար ծավալվեց համայնքային կազմակերպություններում գերակշռության հասնելու համար։ Հաճախ այդ պայքարն ընդունում էր կուսակցական բնույթ։ Միայն 1927 թ. այդ պայքարը մի փոքր հանդարտվեց, և հնարավոր դարձավ համայնքի ինքնավարության մարմինների ընտրությունը։ Ինքնավարության մարմիններ դարձան ներկայացուցչական խորհուրդը՝ բաղկացած 12 հոգուց, համայնքի վարչությունը՝ 7 հոգուց և դպրոցների հոգաբարձությունը՝ կազմված հինգ հիմնական և երկու փոխարինող անդամներից[11]։

Թեհրանի ազգային խորհրդի օրինակով, սկսած 1917 թ. նման վարչություններ ընտրվեցին Համադանում և Արաքում[12]։

1940-ական թթ. սկիզբներին դաշնակցական լիդերները փորձ կատարեցին Թեհրանում թեմական խորհուրդ ստեղծել։ Էջմիածինը չճանաչեց այդ ապօրինի խորհուրդը[13]։ Սակայն այդ փաստը վկայում էր Թեհրանի թեմի ստեղծման անհրաժեշտությունը։ Եվ այս անգամ նոր թեմի

---

6 Տե՛ս «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 37։

7 Նույն տեղում, էջ 92—94։

8 Նույն տեղում, էջ 69, 81, 84։

9 ՀԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1862, թ. 37—44։ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, Կյանքիս հուշերից, Երևան, 1968, էջ 397։

10 Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 397—398։

11 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 112—113։

12 Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 398։

13 ՀԿՊՊԱ, ֆ. 57, Գևորգ արքեպ. Չորեքչյանի 1941 թ. ապրիլի 14-ի կոնդակը։

ստեղծման նախաձեռնությունը իր վրա վերցրեց էջմիածինը։ 1944 թ. ապրիլին այդ նպատակով Իրան ուղարկվեց կաթողիկոսի անձնական ներկայացուցիչը՝ պրոֆ. Աշոտ Աբրահամյանը։ Թեմի պաշտոնական հռչակումից հետո որպես թեմական առաջնորդ Թեհրան ուղարկվեց Վահան ծ. վարդապետ Կոստանյանը։ Թեհրանում նա երկար չմնաց (1945 թ. հունվարից մինչև հունիս) և փոխադրվեց Նոր Ջուղա, որպես Իրանա-հնդկական թեմի առաջնորդ։ Թեհրանի թեմի առաջնորդի պաշտոնում նրան փոխարինեց Ռուբեն Դրամբյանը (1945 թ. հունվարից մինչև 1948 թ. դեկտեմբեր ամիսը)։

Թեմական մարմինները Թեհրանում ստեղծվել են 1947—1949 թթ.։ 1947 թ., մինչև պատգամավորական ժողովի հրավիրումը Թեհրանի թեմական խորհուրդը անցավ այդ պարտականությունների ժամանակավոր կատարմանը։ Նախքան այդ թեմի գործերը կառավարում էր հատուկ հանձնաժողովը[14]։

1944 թ. հոկտեմբերին հանձնաժողովը կազմեց թեմական կանոնադրության նախագիծ, որը էջմիածինը հաստատեց 1945 թ. սկզբին։ Բայց նկատի ունենալով, որ այդ տարիներին էջմիածնում նախապատրաստվում էր հայ եկեղեցու նոր կանոնադրության նախագիծ, թեմական կանոնադրությունը ուժի մեջ մտավ որպես ժամանակավոր կանոնադրություն։

1949 թ. հոկտեմբերին թեմի պատգամավորական ժողովը ընտրեց թեմական խորհրդի կազմ։ Ժողովի ընտրած հատուկ հանձնաժողովը մշակեց թեմական կանոնադրություն, որը պատգամավորական ժողովի հավանությանն արժանացավ 1951 թ. ապրիլին և հաստատվեց կաթողիկոսի կողմից։ Այն ուժի մեջ է մնում առ այսօր։

Կանոնադրության համաձայն պատգամավորական ժողով հրավիրվում է երեք տարին մեկ։ Թեմական խորհուրդը կարող է ունենալ 9—11 անդամ։ 1960 թ. հունվարին Թեհրան թեմական ուղարկվեց Անթիլիասից։

Դպրոցի թեմերի անջատումը էջմիածնից։ 1940-ական թթ. վերջերին արտասահմանյան հայ գաղութներում տեղական և թեմական մարմինները ղեկավարելու հարցում էջմիածնի համար անբարենպաստ պայմաններ ստեղծվեցին։ Դրանք արտահայտություն գտան այն թշնամական դիրքավորման մեջ, որ գրավեցին Կիլիկիայի կաթողիկոսությունը և դաշնակ պարագլուխները Սովետական Հայաստանում գտնվող հայ եկեղեցու մայր աթոռի նկատմամբ։ Այս դիրքավորումը, իր հերթին, հետևանք էր այդ տարիներին ամերիկյան իմպերիալիզմի ստեղծած միջազգային լարված իրադրության, որ հանգեցրել էր Արևելքի և Արևմուտքի հարաբերությունների խիստ սրման։ ՍՍՀՄ դեմ մղվող գաղափարական պայքարում ամերիկյան իմպերիալիստները ձգտում էին օգտագործել իրենց մեթոդների և միջոցների ողջ զինապահեստը։ Այդ պայքարի արտահայտություններից մեկը դարձավ, մասնավորապես, էջմիածնի դիրքի խախտումը արտասահմանյան հայ գաղութներում։ Հենվելով Լիբանանում և Իրանում ամերիկյան դեսպանությունների նյութական ու բարոյական օժանդակության վրա, Կիլիկիայի կաթողիկոսությունը և դաշնակցականները պայքար սկսեցին թեմերը էջմիածնից անջատելու համար։ Զնական առիթ ծառայեց 1328 թ. մորդաղ ամսի 9-ի (1949 թ. հուլիսի 25-ի) իրանական կառավարության որոշումը հոգևոր առաջնորդությունների և լիազոր ներկայացուցիչների վերաբերյալ։ Ըստ այդ որոշման թեմական առաջնորդ ընտրվող հոգևորականը պետք է իրանահպատակ լիներ։

1950-ական թթ. սկզբներին Իրանի դաշնակցականները փորձեցին իրենց ձեռքն առնել Թեհրանի թեմական խորհուրդը, որը նրանց հնարավորություն կտար իրենց ազդեցության տակ գցեր ամբողջ գաղութը։ Այդ նպատակով 1952 թ. Թեհրանի թեմական խորհրդի միջոցով նրանք Իրանի երեք թեմերի համագումար հրավիրեցին։

Դա հայ եկեղեցական կանոնների կոպիտ խախտում էր, քանի որ միջթեմական համագումարների և ժողովների հրավիրումը կաթողիկոսի բացառիկ իրավունքն է։ Այդ կապակցությամբ կաթողիկոսը, ուշադրություն առնելով Թեհրանի թեմական խորհրդի լիազորությունների ժամկետի անցումը, կարգադրեց հրավիրել երեսփոխանական ժողով՝ թեմական նոր խորհուրդ ընտրելու համար[15]։ Սակայն այդ տարիներին Իրանում ստեղծված քաղաքական իրավիճակը լիովին նպաստում էր դաշնակցականներին, և նրանք կարողացան խորհրդի կազմում անցկացնել իրենց հանձնակատարներին, դրանով իսկ ապահովելով այնտեղ իրենց ազդեցությունը։

Ստեղծված պայմաններում էջմիածինը մի շարք քայլեր նախաձեռնեց իր կապերը Իրանի թեմերի հետ ամրացնելու ուղղությամբ։ 1955 թ. Իրան ուղարկվեց կաթողիկոսի ներկայացուցիչ

---

14 ՀԿՊՊԱ, գ. 57, հանձնաժողովի դիմումը կաթողիկոսին, 4 հոկտ. 1944։

15 ՀԿՊՊԱ, ֆ. 57, 1952 թ., կաթողիկոսի նոյեմբերի 3-ի նամակը Թավրիզի առաջնորդական փոխանորդին։

Հմայակ վարդապետ Ինդոյանը, որը ամերիկյան հպատակ էր։ Բայց Թեհրան ժամանելով, կաթողիկոսի ներկայացուցիչը չընդունվեց թեմական իշխանությունների կողմից և ստիպված էր թողնել երկրի սահմանները[16]։ Դրանից անմիջապես հետո նույնանման ևս մի փորձ կատարվեց, երբ Թեհրանից անցնելիս այնտեղ կանգ առավ Կալիֆորնիայի թեմի առաջնորդ Բարկեն վարդապետ Վարժապետյանը։ Նա պետք է Իրանի հավատացյալ հայ ժողովրդին հաղորդեր կաթողիկոսի օրհնանքները, բայց այդ հնարավորությունը նրան չտրվեց[17]։

Այդ ժամանակամիջոցում Կիլիկիայի կաթողիկոսությունը չէր դադարեցնում իր քայքայիչ գործունեությունը էջմիածնի նկատմամբ։ 1957 թ. Իրան ուղարկվեց լիրանանահայ թեմի առաջնորդ Խորեն արքեպիսկոպոսը։ Խորենի «միսիան» կայանում էր նրանում, որպեսզի վարկաբեկի էջմիածնի դերը արտասահմանյան հայկական թեմերում և «հիմնավորի», թե այդ իրավունքը պատկանում է Կիլիկիայի կաթողիկոսությանը։ Հակառակ գաղութի հավատացյալ բնակչության մեծամասնության կամքին, Անթիլիասին և նրա գործակիցներին՝ դաշնակ պարագլուխներին, հաջողվեց տեղական թեմերի ղեկավարությանը իրենց կողմը թեքել։

1950-ական թթ. վերջերին գաղութի թեմերի անջատումը էջմիածնից կատարված փաստ էր, մնում էր միայն այն գրանցել թղթի վրա։ 1958 թ. փետրվարի 25-ին Թեհրանի թեմի պատգամավորական ժողովը որոշում ընդունեց դադարեցնել հարաբերությունները էջմիածնի հետ և հարել Կիլիկիայի կաթողիկոսությանը։ Հուլիսի 12-ին համանման որոշում հանեց Թավրիզի թեմի պատգամավորական ժողովի և թեմական խորհրդի միացյալ նիստը։ Հոկտեմբերի 23-ին տեղական եկեղեցական խորհրդի հրավերով հավաքվեց Սպահանի թեմի պատգամավորական ժողովը։ Հետագայում նիստերից մեկում որոշվեց վերանայել թեմական կանոնադրությունը։ Միաժամանակ հաստատվեց Բեյրութից ուղարկված թեմական առաջնորդի թեկնածությունը։

Այսպիսով, 1950-ական թթ. վերջերին գաղութի թեմերը իրավաբանորեն ձևակերպեցին իրենց անջատումը էջմիածնից։ Դրանով իսկ դադարեց գաղութի թեմերի դարավոր ենթակայությունը հայ եկեղեցու մայր աթոռին և կտրվեց իրանահայերի կենսականորեն կարևոր կապերից մեկը իրենց նախնիների հայրենիքի հետ։

Թեհրանի և Թավրիզի թեմական իշխանությունները կաթողիկոսին հղած նամակներում իրենց նպակների խզումը մայր աթոռի հետ հիմնավորում էին նրանով, որ իբր թե 1328 թ. մորդադ ամսի 9-ի իրանական կառավարության որոշումից հետո այդ կապերը սոսկ ձևական և անվանական բնույթ էին կրում[18]։ Նման պնդումը իրականությանը չի համապատասխանում։ Թեհրանի թեմական խորհրդում 1952—1953 թթ. դաշնակների ազդեցության հաստատումից հետո էլ էջմիածինը, ինչպես երևում է վերը ասվածից, շարունակում էր Թեհրանի և մյուս թեմերի հետ կապ պահպանել։ Ավելին, էջմիածինը օրինական ճանաչեց իրանական կառավարության որոշումը և հետագայում Թավրիզի առաջնորդական փոխանորդի և Թեհրանի թեմի առաջնորդի պաշտոնում նոր քաշեց իրանահպատակ հոգևորականների[19]։

Փաստերը ցույց են տալիս, որ այդ բոլոր իրադարձությունների հիմքում ընկած են քաղաքական պատճառներ։ Անջատման նախադրյալներ կային արդեն 1917—1920 թթ. երբ Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթանակեց և Հայաստանում սովետական իշխանություն հաստատվեց։ Այդ պահից Իրանի կառավարող շրջանները փաստորեն չէին հաստատում էջմիածնի ներկայացրած թեկնածությունները թեմակալների պաշտոնում։ Բացառություն են կազմում որպես Իրանա-հնդկական թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի հաստատումը 1926 թ. և Վ. Կոստանյանի ու Ռ. Դրամբյանի հաստատումը 1944 թ.։ Մեսրոպ Մագիստրոսը Նոր Ջուղայում թեմակալ դարձավ էջմիածնի և Ռեզա շահի կառավարության միջև կայացած համաձայնությամբ։ Ռեզա շահի կառավարման առաջին տարիներին այդ միջոցառումը միանգամայն թույլատրելի էր։ Բայց շուտով իրանական կողմի գիրքը ավելի որոշակի դարձավ, և 1930 թ. Մեսրոպ Եպիսկոպոսին առաջարկվեց հեռանալ Իրանից[20]։ Հասկանալի են նաև իրանական կառավարության կողմից պատերազմի տարիներին Իրան ուղարկված Վ. Կոստանյանի և Ռ. Դրամբյանի թեկնածությունների հաստատման պատճառները։

---

16 «էջմիածին», 1958, հունիս, էջ 14։

17 Նույն տեղում, էջ 15։

18 Նույն տեղում, էջ 7, սեպտեմբեր, էջ 8։

19 Նույն տեղում, էջ 10—13։

20 ՀԿՊՊԱ, ֆ. 57, Իրանի կառավարության ղեկավարին 1930 թ. հոկտեմբերի 21-ին էջմիածնի ուղարկած գրության պատճենը։

Իրանական իշխանությունների իսկական դեմքը այդ հարցում պարզվեց Թավրիզի թեմական առաջնորդ ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հանդեպ ունեցած վերաբերմունքից։ Ինչպես հայտնի է, նա առաջնորդ էր ընտրվել դեռևս 1913 թ.։ Հեղափոխությունից հետո էլ մնալով այդ պաշտոնում, նա տեղական դաշնակ պարագլուխներին թույլ էր տալիս խառնվել եկեղեցական գործերին, որի հետևանքով 1920-ական թթ. Թավրիզի թեմական առաջնորդություն ընկավ նրանց հսկողության տակ։ Իրանական իշխանությունները իրենց հերթին ճնշում էին գործադրում թեմական առաջնորդի վրա, պահանջելով իրանական հպատակություն ընդունել, «դադարեցնել հարաբերությունները էջմիածնի հետ, օտար երկրի հետ և թույլ չտալ օտարներին խառնվել իրանահայերի եկեղեցական գործերին»[21]։ Գևորգ V կաթողիկոսի 1929 թ. օգոստոսի 15-ի՝ իրանական կառավարությանը ուղղված ուղերձով ներսես արքեպ. Մելիք-Թանգյանը հանվեց իր պաշտոնից։ Սակայն իրանական իշխանությունները շարունակում էին նրան թեմական ճանաչել[22]։

Էջմիածնից թեմերի անջատման հարցում քաղաքական դրդապատճառների առկայությունն են հավաստում Անթիլիասի կապերը ամերիկացիների հետ։ Այդ կապերը իսկույն երևացին, երբ անջատումից անմիջապես հետո, 1958 թ. մայիսի 28-ին ԱՄՆ-ի սենատում Անթիլիասի ներկայացուցիչը հանդես եկավ հակասովետական հայտարարություններով[23]։

Գաղութի ճնշող մեծամասնությունը, հատկապես աշխատավոր բնակչությունը, որը հայրենասիրական զգացմունքներ է տածում դեպի մայր-հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, փաստորեն չճանաչեց Բեյրութից ուղարկված թեմակալներին։ Իրանահայերի հավատացյալ մասը Հայաստան վերադառնալու ձգտումը կապել է Էջմիածնի հետ, որով ավելի է բարդանում վիճակը։

Այդ ամենը պայմանավորեց Էջմիածնի և Անթիլիասի միջև հաշտության եզրեր փնտրելու անհրաժեշտությունը։ Նման հնարավորություն ստեղծվեց 1963 թ. հոկտեմբերին, երբ ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն այցելեց Երուսաղեմ[24]։ Սակայն Բեյրութից ժամանած Խորեն կաթողիկոսը միայն հաշտություն ձևացրեց, հետագայում էլ շարունակելով Էջմիածնի դիրքերը քայքայելու իր գիծը։

Այդ գծի փաստացի հաստատումը եղավ Կիլիկիայի կաթողիկոսության 1965 թ. նոր կանոնադրությունը, որով թղթի վրա գրառվում էր, որ Իրանի թեմերը անջատված են Էջմիածնից։ Դա իր արտահայտությունը գտավ կանոնադրության 32-րդ հոդվածում, որտեղ Անթիլիասին ենթակա թեմերի թվում հիշատակվում են Թեհրանի, Ատրպատականի և Իրանա-Հնդկական թեմերը[25]։ Իրումն այդ ամենի, կանոնադրության 33-րդ հոդվածում «մեկնաբանվում է» Էջմիածնի մյուս թեմերի անցումը Անթիլիասին[26]։

Իրանահայերի ընտանեական և ժառանգական իրավունքները։ Հայկական դարավոր սովորույթների և հայ եկեղեցու կանոնների համաձայն թեմական մարմինները վաղուց ի վեր օգտվում են մի շարք ընտանեկան և ժառանգական հարցերի լուծման իրավունքից, ինչպես՝ ամուսնության, ապահարզանի, որդեգրման, ժառանգության, կտակի և այլն։ Այդ իրավունքի առկայությունը պայմանավորված է կրոնական դավանանքների տարբերությամբ։ Քանի որ Իրանում տիրող շարիաթը անհաշտ է քրիստոնյաների ընտանեկան-ժառանգական իրավունքների հանդեպ, Իրանի կառավարիչները և շահերը աշխատել են առանձնացնել դրանք որպես իրավական նորմերի մի խումբ, որը իրականացվում է եկեղեցական ինքնավարության շրջանակներում։ Այդպես շարունակվեց մինչև Իրանում սահմանադրական կարգեր հաստատվելը։ 1905—1911 թթ. իրանական հեղափոխությունը, հռչակելով մի շարք բուրժուական իրավական նորմաներ, գրանցել է դրանք երկրի սահմանադրության մեջ[27]։ Բայց քանի որ հեղափոխության պտուղներից օգտվեցին լիբերալ բուրժուա-կալվածատիրական շրջանները, մինչև 1930 թ. ազգային փոքրամասնություն-

---

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 «Էջմիածին», 1959, հուլիս, էջ 63—66։

24 Նույն տեղում, 1964, փետրվար-մարտ, էջ 159—161։

25 Նույն տեղում, 1966, հունվար, էջ 37—42։

26 Նույն տեղում, էջ 42։

27 Պարսկական լիբերալ բուրժուա-կալվածատիրական արիստոկրատիայի և հոգևորականության ներկայացուցիչները սահմանադրություն կազմելիս «մելլեթիթ» (ժողովուրդ, ազգ, ազգություն) հիմնական հատկանիշ են համարել դավանությունը, ինչպես որ է միջնադարյան մուսուլմանական իրավունքներում (տե՛ս С. М. Алиев. К национальному вопросу в современном Иране, «Краткие сообщения Института народов Азии», М., 1964, № 77, էջ 47)։

ների իրավունքները, այդ թվում նրանց ընտանեկան-ժառանգական իրավունքները, իրանական օրենսդրության մեջ իրենց արտահայտությունը չեն գտել։

Միայն դատարանակազմության օրենքի ռեֆորմի ընթացքում[28] հայերի, ինչպես նաև ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքները արտահայտություն գտան իրանական գործող օրենսդրության մեջ։ 1312 թ. թիր ամսի 31-ին (1933 թ. հուլիսի 22-ին) մեջլիսը հաստատեց ոչ-շիաների (սուննիների, քրիստոնյաների, զրադաշտականների, հրեաների և մյուսների) ընտանեկան հարցերի վերաբերյալ օրենսդրության նախագիծը։ Համաձայն նախագծի, ամուսնության կամ ապահարզանի դեպքում երկրի դատական մարմինները պետք է գործերը քննարկեին համաձայն ամուսնու կրոնական պատկանելության, իսկ կտակի կամ ժառանգության դեպքում՝ ըստ հանգուցյալի կրոնական դավանանքի։ Որդեգրման հարցը պետք է քննարկվեր որդեգրող հոր կամ մոր կրոնական պատկանելության համաձայն։

1935 թ. Իրանի արդարադատության մինիստրության առաջարկությամբ գաղութի թեմական և ազգային մարմինները պատրաստեցին 74 հոդվածներից կազմված օրենքների ժողովածու, որը 1937 թ. մայիսի 21-ին հաստատվեց կաթողիկոսի կողմից[29], այնուհետև թարգմանվեց պարսկերեն և հանձնվեց Իրանի արդարադատության մինիստրությանը[30]։

Ինչո՞վ էր թելադրված 1312 թ. թիր ամսի 31-ի օրենքի հրապարակման անհրաժեշտությունը և գաղութի համար օրենքների ժողովածուի ստեղծումը։ Այդ հարցին պատասխանելու համար մենք կրկին պետք է անդրադառնանք գաղութի իրավական դրությանը, որը հիմնված էր կրոնա-եկեղեցական ինքնավարության վրա։ Ինչպես թեմական կառուցվածքը, այնպես էլ ընտանեկան-ժառանգական բնույթի հարցերը Իրանում պատկանում են կրոնական մարզին։ Այդտեղից էլ բխում է դեռևս մուսուլմանական իրավունքի ազդեցության տակ գտնվող իրանական օրենսդրության ձգտումը՝ այլակրոն ազգային փոքրամասնությունների իրավունքները ինչ-որ ձևով հավասարեցնել տիրող ազգի իրավունքներին։

Գաղութի օրենքների ժողովածուն դարձավ ուղեցույց փաստաթուղթ՝ իրանահայերի դատական գործերի քննության համար։ Այժմ էլ դատական մարմինները նրանով են ղեկավարվում։

Սակայն դատավարության պրակտիկայում, ժողովածուի պատրաստումից որոշ ժամանակ անց, մի շարք անհամապատասխանություններ պարզվեցին նրա և 1312 թ. թիր ամսի 31-ի օրենքի միջև։ Բանն այն է, որ իրանական դատարանները, կառչելով օրենքի տառին, հայերի գործերը քննարկում են օրենսգրքով վերապահված սոսկ հինգ դեպքերում՝ ամուսնության, ապահարզանի, կտակի, ժառանգության և որդեգրման։ Դա որոշակի դժվարություններ է ստեղծում ընտանեկան-ժառանգական բնույթի մի շարք այլ հարցերի քննության մեջ, որոնք չկան օրենսգրքում, բայց նախատեսված են գաղութի օրենքների ժողովածուում։ Այդ հարցերից է, օրինակ, անչափահաս երեխաների խնամակալությունը[31]։ Մյուս ընտանեկան-ժառանգական հարցերի թվում իրանական դատարաններում դրանք վճռվում էին դեռևս նախքան սահմանադրության ընդունումը և ուժի մեջ էին մնացել ընդհուպ մինչև դատարանակազմության ռեֆորմը[32]։

Վերջին ժամանակներս թեմական մարմինները ջանք են թափում, որպեսզի համապատասխան իշխանությունների հետ վարած բանակցությունների միջոցով լուծեն այդ հարցը։

Հարկ է նշել, որ մինչև 1950-ական թթ., ի տարբերություն արտասահմանյան հայկական այլ գաղութների, Իրանի հայկական գաղութի թեմերը ընտանեկան-ժառանգական (հատկապես ամուսնության և ապահարզանի) գործերի վերաբերյալ տեղական եկեղեցական և ազգային խոր-

---

28 Դատարանակազմության օրենքը հրապարակված է 1928 թ.։ Լրացումներ և փոփոխումներ մտցված են 1936 թ.։

29 ՀԿՊՊԱ, ֆ. 57, «Իրանահայության ընտանեկան և ժառանգական իրավունքները ըստ հայադավան առաքելական եկեղեցական կանոնների և սովորությունների և պետական օրենքների»։

30 Նույն տեղում, ֆ. 57, «Տեղեկագիր Թեհրանի հայոց եկեղեցական վարչության 10 ապրիլի 1942—29 հունիսի 1944 թ. գործունեության»։

31 Համաձայն իրանական օրենսդրության, հորը կորցրած զավակները համարվում են խնամակալությունից զուրկ, այսինքն որբ։ Նրանք հասունացած են համարվում 25 տարեկանից։ Այդ պարագան լուրջ խոչընդոտ է հանդիսանում մասնավորապես հայրենադարձության գործում և հաճախ հանգեցնում է հայրենադարձների ընտանիքների բաժանմանը, քանի որ որբը իրավունք չունի դուրս գալու իրանական հպատակությունից։

32 ՀԿՊՊԱ, ֆ. 57, «Տեղեկագիր Թեհրանի հայոց եկեղեցական վարչության 10 ապրիլի 1942—29 հունիսի 1944 թ. գործունեության»։

հուրդների որոշումները ներկայացնում էին Էջմիածնի կաթողիկոսի հաստատմանը[33], նպե մի կողմ թողնենք լոկ կրոնական բնույթի նկատառումները, այդ ավանդույթը վկայում է իրենց մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ իրանահայերի բազմադարյան կապերի մասին։ Միայն վերջին տարիներին, երբ դաղութի թեմերը անջատվեցին Էջմիածնից, ընտանեկան-ժառանգական հարցերը սկսեցին հաստատվել տեղում։

Ընտանեկան-ժառանգական հարցերի վճռահատումների իրավունքը գալիս է դարերի խորքից, մարմնավորում է գաղութի կենսունակությունը։

Հայկական դպրոցների ներքին ինքնավարությունը։ Իրանում հայկական ազգային դպրոցների գոյության իրավական երաշխիքը հաստատված է իրանական շահերի մի շարք ֆերմաններով[34]։ Իրենց ծագման օրից, XIX դարի 30-ական թթ. մինչև 1936 թ., մի ամբողջ հարյուրամյակ, հայկական աշխարհիկ հանրակրթական դպրոցները օգտվել են ներքին ինքնավարության իրավունքից։ Դա արտահայտվել է այն բանում, որ հայկական դպրոցները առաջնորդվել են սեփական ուսումնական ծրագրերով, իսկ ուսուցման հիմքը եղել է հայոց լեզուն։ Դպրոցները կառուցվել ու պահպանվել են ծխականների միջոցներով և հանդիսացել են գաղութի սեփականությունը՝ ի դեմս տեղական թեմական մարմինների։ Նրանց ղեկավարությունը իրագործել են դպրոցական հոգաբարձությունները, որոնք ընտրվել են թեմական կամ համայնքի խորհրդի կողմից։

Իրանական սահմանադրությունը երաշխավորել է (թեև, սահմանափակ ձևով) ազգային դպրոցների գոյությունը։ Այսպես, «Լրացումներ հիմնական օրենքին» 19 հոդվածում խոսվում է ժողովրդական միջոցներով դպրոցներ ստեղծելու մասին[35]։ Չնայած դրան, 1936 թ., պետության «իրանացման» քաղաքականության իրագործման ընթացքում, հայկական, ինչպես նաև ազգային մյուս փոքրամասնությունների դպրոցները իրանական կառավարության կարգադրությամբ փակվեցին։ Հիմք չունենալով «իրանացման» ենթարկել հայերին կրոնական մերձավորության հատկանիշով, ինչպես այդ արվում էր ադրբեջանցիների, քրդերի, արաբների և մյուս մուսուլման ժողովուրդների նկատմամբ, իրանական իշխանությունները ընթացան գաղութը ազգային դպրոցներ պահելու իրավունքից բացահայտ կերպով զրկելու ուղիով։

Սակայն 1941 թ., Մերձավոր և Միջին Արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծավալված ազգային-ազատագրական շարժման ազդեցության տակ, իրանական իշխանությունները հարկադրված եղան վերացնել ազգային դպրոցների արգելքը։ Զևականորեն հայկական դպրոցների վերաբացումը տեղի ունեցավ Թավրիզի թեմական ներսես արքեպ. Մելիք-Թանգյանի Իրանի նոր շահին արված միջնորդությամբ[36]։

Վերականգնելով գաղութի իրավունքները ազգային դպրոցների վերաբերյալ, իրանական կառավարությունը, սակայն, տարրական դպրոցներում մտցրեց Իրանի լուսավորության մինիստրության ծրագիրը։ Այդ կապակցությամբ հայկական դպրոցներում ուսուցման հիմքը դարձավ պետական լեզուն՝ պարսկերենը։ Ծրագրից դուրս հայկական դպրոցներում թույլատրվում էր սոսկ հայոց լեզվի և կրոնի ուսուցումը։ Այդ երկու առարկաները մտան ոչ-պարտադիրների շարքը։ 1946 թ. Թեհրանի թեմական խորհրդի միջնորդությամբ կրոնը ճանաչվեց որպես պարտադիր առարկա։ Հայոց լեզուն դեռևս նման ճանաչում չի ստացել։

Փաստերը ցույց են տալիս, որ հայկական դպրոցների նկատմամբ տեղի է ունեցել իրավական պարտականությունների յուրատեսակ բաժանում գաղութի թեմական մարմինների և լուսավորության մինիստրության միջև։ Մինիստրությունը պատասխանատու է պետական ծրագիրն անցնելու համար, իսկ թեմական մարմինները իրենց վրա են կրում դպրոցների նյութական բազայի պահպանման և ամրապնդման, դպրոցական բյուջեի բալանսի, դպրոցական նոր շեն-

---

33 «Էջմիածին», 1958, հունիս, էջ 13։

34 Մենք մեր տրամադրության տակ չունենք հայկական դպրոցների ստատուսի վերաբերյալ Իրանի շահերի բոլոր հրովարտակների և իրավական փաստաթղթերի ցուցակը։ Բայց բերված պատմական փաստաթղթերը, մեր կարծիքով, բավական են հիմնավորելու հայկական դպրոցների իրավունքները։ Դրանք տե՛ս Հ ա յ կ Ա ճ ե մ յ ա ն, Պատմություն Արամյան ազգային դրպրոցի, Թավրիզ, 1936, էջ 26—27։ Հ. Տ ե ր-Հ ո վ հ ա ն յ ա ն ց, Նոր Ջուղայի պատմություն, հատ. 2, էջ 83—85։ ՀԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 224, էջ 13—18։ Ե. Ֆ ր ա ն գ յ ա ն, Ատրպատական, էջ 108—109։

35 «Конституции государств Ближнего и Среднего Востока», М., 1956, էջ 189։

36 Հ ա յ կ Ա ճ ե մ յ ա ն, Հիշատակարան և պատկերացույց Թեհրանի Իսրայել Սահակյան... դպրոցների, Թեհրան, 1961, էջ 29։

յերի կառուցման բոլոր հոգսերը։ Սակայն սեփականատիրական իրավունքի տեսակետից հիմք կա այդ դպրոցները գաղութի ազգային հիմնարկները հաշվելու։

Հայերի ներկայացուցչությունը մեջլիսում։ Իր դեպուտատներին իրանական պառլամենտ ուղարկելու իրավունքը Իրանի հայ ազգաբնակչությունը ստացել է 1905—1911 թթ. հեղափոխության տարիներին։ Այդ իրավունքը բխում է 1909 թ. մեջլիսի երկրորդ գումարման ընդունած ընտրական օրենքի համապատասխան հոդվածից, ըստ որի յուրաքանչյուր 50000 մարդուց ընտրվում է մեկ դեպուտատ։ Տվյալ դեպքում ազգային խմբերը առանձնացված են հատուկ կուրիաներում և կազմում են յուրատեսակ ընտրական օկրուգներ՝ ըստ ազգային և կրոնական հատկանիշի[37]։

Սակայն այդ իրավունքի առաջացման պատճառները սահմանելու համար վերևում բերված բացատրությունը բավարար չէ։ Դրա համար անհրաժեշտ է այդ իրավունքը համեմատել իրանահայերի մյուս իրավունքների հետ։ Համադրումը բերում է այն եզրակացության, որ բոլոր այդ իրավունքները ըստ իրենց ծագման բնույթի միանման են։ Բոլոր դեպքերում էլ դրանք, ըստ էության, իրանական օրենսդրությամբ դասվում են այն իրավունքների շարքը, որոնք կիրառվում էին գաղութի շրջանակներում։

Համոզվելու համար բավական է վերլուծել մեջլիսում հայ դեպուտատների ֆունկցիաները։ Դրանք, ինչպես նաև մյուս ազգային փոքրամասնությունների դեպուտատների ֆունկցիաները սահմանափակված են գաղութին վերաբերող հարցերի շրջանակներով։ Մյուս դեպքերում հայ դեպուտատների դերը իրանական պառլամենտում նիստերին նրանց ձևական մասնակցությունն է։

Ընտրական իրավունքը ընդունելու տարում Իրանում 50 հազարից շատ ավելի հայեր էին հաշվվում, որը գաղութին իրավունք էր վերապահում ընտրելու երկու դեպուտատ։ Դրա հետ մեկտեղ, տեղական հայ գաղութը պատմականորեն բաժանված էր երկու շրջանների՝ իրենց առանձին թեմական հաստատություններով։ Բայց Իրանի կալվածատիրական-բուրժուական շրջանները հեղափոխության տարիներին վերացրին հայ բնակչության այդ օրինական իրավունքը[38]։ Միայն 1915 թ. այն վերանայվեց և գաղութը մեջլիսում երկրորդ դեպուտատական տեղի իրավունք ստացավ։ 1922 թ. հայ ազգաբնակչությունը չորրորդ գումարման մեջլիսում ընտրեց երկու դեպուտատներ՝ մեկական հյուսիսային և հարավային շրջաններից[39]։

Չնայած հայերի ներկայացուցչության ողջ պայմանականությանը, այդ իրավունքը նրանց որոշ հնարավորություն է տալիս ըստ անհրաժեշտության մեջլիսում պաշտպանելու իրենց շահերը։ Հայ դեպուտատները, օրինակ, օգտվում են հայ ազգաբնակչության դիմումները և գանգատները քննարկելու, պետական և վարչական մարմինների առաջ միջնորդելու, գաղութի օրենքները երկրի օրենքների հետ համապատասխանեցնելու նախաձեռնության իրավունքից և այլն։ Թեմական մարմինները մինիստրությունների և գերատեսչությունների հետ հաղորդակցվում են այդ դեպուտատների միջոցով։

Հայերին, ասորիներին, զրադաշտականներին ներկայացուցչական իրավունք տրվեց նաև 1960 թ.[40]։

---

37 Ազգային փոքրամասնություններին այդ իրավունքը վերապահված էր դեռևս 1907—1908 թթ.։ Սակայն ռեակցիոն շիա հոգևորականության ջանքերով հայերի և հրեաների այդ իրավունքը առաջին գումարման մեջլիսի ընտրությունների ժամանակ ոչնչի հավասարվեց (տե՛ս С. М. Алиев, նշվ. աշխ., էջ 48)։

38 Մեջլիսում հայերի երկու դեպուտատների հարցը 1908—1910 թթ. վիճաբանությունների առարկա դարձավ մի կողմից՝ լիբերալ և բուրժուա-կալվածատիրական շրջանների և մյուս կողմից՝ գաղութի թեմական մարմինների միջև։ Այն քննարկվել էր դեռևս առաջին գումարման մեջլիսում (տե՛ս «Մշակ», 1908, 5 և 25 հունիսի) և նորից արծարծվել ընտրական օրենքի մշակման ընթացքում, իսկ հետո երկրորդ գումարման մեջլիսում։ Հատկանշական է, որ հայերը մերժում էին իրենց հակառակորդների թեզն այն մասին, որ իբր թե հայերի պահանջը պետք է դիտել որպես վարձ՝ սահմանադրական շարժման մեջ նրանց ունեցած մասնակցության համար (տե՛ս «Վերածնունդ», 1933, 28 հոկտեմբերի)։

39 Մեջլիսում հայ դեպուտատները միաժամանակ ներկայացնում էին հիմնականում երկրի հյուսիսային մասում բնակվող ասորի բնակչությանը։ 20-րդ գումարումից սկսած մեջլիսում մեկ տեղ հատկացված է ասորիների ներկայացուցչին։

40 Avery Peter, Modern Iran, London, 1965, էջ 490։

Մեջլիսում հայերի ներկայացուցչության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ երկրում սահմանադրական կարգի գոյության պայմաններում այն նոր, ժամանակակից գունավորում է ընդունել։

Սահմանադրության պտուղներից օգտվում է գաղութի առանձնաշնորհյալ մասը, ի դեմս բուրժուական շրջանների և լիբերալ մտավորականության։ Աշխատավորությունը մեծ մասամբ զրկված է դեպուտատների ընտրությանը մասնակցելուց, քանի որ ամբողջ երկրում գոյություն ունեն բազմապիսի ցենզեր գրագիտության, նստակեցության, ունեցվածքի և այլն։ Այսպես, ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն 20 տարեկան հասակի հասած այն անձինք, որոնք տվյալ ընտրական օկրուգում բնակվում են վեց ամսից ոչ պակաս և վճարել են հարկերը։

Միաժամանակ հարկ է նշել, որ ի տարբերություն երկրի հիմնական (մուսուլմանական) բնակչության, հայ կանայք միշտ օգտվել են ընտրական իրավունքից։

Իրանահայերի իրավունքների սահմանափակումները։ Ինչպես երևում է վերևում ասվածից, Իրանում տեղաբնակ հայ բնակչությանը տրված իրավունքները ուժ ունեն միայն գաղութի սահմաններում։ Դրանում է արտահայտված իրանական օրենսդրության առանձնահատկությունը, որը դեռևս չի հրաժարվել մուսուլմանական իրավունքի ազդեցությունից։ Այդ առանձնահատկությունը պետք է նկատի առնել ամեն անգամ, երբ հարցը վերաբերում է Իրանի հայ բնակչության դրության իրավական կողմին, քանի որ իրավական երաշխիքների հետ միասին այն ծնում է նաև իրավունքների որոշակի սահմանափակումներ։

Իրանահայերը զգալի չափով զուրկ են միությունների, ժողովների և մամուլի ազատությունը երաշխավորող իրավունքներից[41]։ Իհարկե, դրանք չեն ընդունում բուն իսկ իմաստով ազգային սահմանափակումների բնույթ։ Այսպես թե այնպես, 1920-ական, ինչպես նաև 1940—1950-ական թթ. արգելվեց լույս ընծայել մի շարք հայկական թերթեր, ամսագրեր և այլ պարբերական հրատարակություններ[42]։ Դրա հետևանքով հայ պարբերական հրատարակությունների թիվը Իրանում խիստ սահմանափակ է։

1920—1930-ական թթ. Իրենց գոյությունը դադարեցրին հայկական գրեթե բոլոր կուսակցություններն ու խմբավորումները։ Այժմ կիսապաշտոնական ձևով գոյություն ունի սոսկ դաշնակցական կազմակերպությունը։

Հայ ազգաբնակչության իրավունքների սահմանափակման թվին են պատկանում նաև կրոնական ճնշումները։ Դեռ մինչև 1930—1940-ական թթ., օրինակ, մուհառամի օրերին հայերը, ասորիները, հրեաները և օտարերկրացիները, որպես կանոն, փողոց գուրս չէին գալիս, քանի որ ոչ մուսուլմանների համար վտանգավոր էր փողոցում հայտնվելը[43]։ Պարսիկների, ադրբեջանցիների և մյուս մահմեդական ժողովուրդների ու ցեղերի ֆանատիկոս մասի կրոնական մոլեռանդ տրամադրությունները թեև ներկայումս էլ պահպանվում են, բայց բուռն պոռթկում չեն ունենում։ Դրան նպաստում է այն, որ իրանական իշխանությունները վերջին տարիներին անհրաժեշտ միջոցառումներ են ձեռք առնում հսկելու այդ տոնակատարությանը։

Պետական գործերում կրոնի ազդեցության թուլացմամբ, հատկապես Ռեզա շահի կառավարության անցկացրած ռեֆորմներից հետո Իրանում զգալիորեն կրճատվել են կրոնական ճնշումների ռեցիդիվները հայերի և ազգային մյուս փոքրամասնությունների նկատմամբ։ Բայց ազգային ընդհարումները մնում են։ Որոշ արևմտյան հեղինակներ անգամ հակված են մտածելու, որ կրոնական անհանդուրժողականության թուլացումը հանգեցրել է ազգային հակասությունների ուժեղացմանը[44]։ Դրանում կա ճշմարտության նշույլ, քանի որ ժամանակակից իրանական հասարակության մեջ շարունակում են գոյություն ունենալ տիրող ազգ, ոչ-պարսիկ ժողովուրդներ և ազգային փոքրամասնություններ հասկացությունները։

---

41 Ի նկատի ունենք «Լրացում հիմնական օրենքին» 20 և 21 հոդվածները (տե՛ս «Конституции государств Ближнего и Среднего Востока», էջ 189—190)։

42 Հայկական թերթերի արգելքը իրագործվել է ադրբեջաներեն, քրդերեն և նոր սիրիական լեզուներով հրատարակվող թերթերի հետ մեկտեղ (տե՛ս С. М. Алиев, սշտ. աշխ., էջ 54)։

43 E. Groseclose, Introduction to Iran, New York, 1947, էջ 104։

44 W. Haas, Iran, New York, 1946, էջ 171—172։

* * *

Փաստերը ցույց են տալիս, որ քննարկվող ժամանակաշրջանում գաղութի իրավական վիճակը անցել է երկու փուլ՝ մինչև 1936 թ. և 1936—1941 թթ. հետո։ 1936 թ. վերջացավ այն ժամանակահատվածը, որն իր սկիզբն առնում էր Իրանում կապիտալիզմի առաջացմամբ, և երբ իրանահայ գաղութը օգտվում էր ներքին ինքնուրույն զարգացման իրավունքից։

Ռեզա շահի կառավարման շրջանը նշանավորվեց ռեֆորմների քաղաքականությամբ, որոնք նպաստեցին Իրանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Սակայն բուրժուա-կալվածատիրական շրջանների դասակարգային նեղ շահերին ենթարկված ռեֆորմների անցկացման մեթոդը մի շարք դեպքերում հակաժողովրդական բնույթ էր կրում։ Այդ քաղաքականության հետևանքներից մեկը եղավ, մասնավորապես, հայկական դպրոցների փակումը, մի շարք հայկական կազմակերպությունների և թերթերի արգելումը։

1941 թ. հետո Ռեզա շահի քաղաքականության հետևանքները զգալի չափով վերացվեցին։ Այդ ժամանակաշրջանում, մասնավորապես, վերաբացվեցին հայկական դպրոցները, կենդանացավ զանազան կազմակերպությունների գործունեությունը, լույս ընծայվեցին մի շարք նոր թերթեր և պարբերական հրատարակություններ։

Սակայն 1953 թ. սկսվեց սահմանափակումների նոր շրջան, որի հետևանքով մի շարք կազմակերպություններ և մամուլի օրգաններ նորից փակվեցին։

Ո՞րն է գաղութի ներկա իրավական վիճակի առանձնահատկությունը։ Սկսած 1950-ական թթ. երկրորդ կեսից, Իրանի վարչական շրջանները որոշակիորեն փոխեցին իրենց վերաբերմունքը ազգային փոքրամասնությունների իրավական դրության խնդրի հանդեպ։ Հայերի նկատմամբ դա արտահայտվեց 1960 թ. դեկտեմբերին Սպահանի համալսարանի բանասիրական ֆակուլտետին կից և 1964 թ.՝ Թեհրանի համալսարանի նույն ֆակուլտետին կից հայագիտության բաժանմունք բացելու իրավունք տրամադրելով[45]։ Գաղութի իրավական դրության վրա նախկինի պես ներգործում է կյանքից ետ մնացած իրավական օրենսդրությունը, որն ի վիճակի չէ հայ բնակչությանը տրամադրել լիիրավ երաշխիքներ, այն է՝ հավասարություն օրենքի առջև առանց սեռի, հասակի, ազգության և կրոնի խտրության։

Նման պայմաններում կրոնական-եկեղեցական ինքնավարությունը, ինչպես և դարեր առաջ, շարունակում է գաղութի իրավական վիճակի հիմք ծառայել։ Ինքնավարության այդ ձևի շրջանակներում գործում են օրենսդրական և գործադիր մարմինները, տարբեր կազմակերպությունները և հաստատությունները։ Դրանում է արտահայտվում հայ եկեղեցու դերը, որը գաղութին շնորհում է աշխարհիկ վարչական կառուցվածքի որոշ տարրեր։

---

[45] „Народы Азии и Африки", 1965, № 5, էջ 240։ «Քեյհան» (պարսկերեն թերթ), 1964, հունիսի 17։